

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆԸ Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Հայ ճարտարապետական գիտությունների շարքում իր ուրույն տեղն ունի Ղեուոնդ Ալիշանը: Հայկական ճարտարապետություն համալիր հետազոտություն խնդիրը Ալիշանի մշտական ուշադրությունն ու քննարկմանն է արժանացել: Ինչպես իրաւացիօրէն նշել է հայր Լեւոն Զէքիեանը «Ինչպէս ամէն մեծ գործ, որ ժամանակի մէջ ակօսներ կը բանայ, «Բազմավէպ»-ն ալ մտքի երկունքն է երկու արծուեհայեաց, տեսլապաշտ հոգիներու. երկու մը-խիթարաշունչ վարդապետներու՝ Հ. Գաբրիէլ Այվազովսկիի եւ Հ. Ղեւոնդ Ալիշանի: Վերջինս վերակոչուած՝ ինք եւս նահապետ, նկատուած հայ ումանթիկներու ռահվիրան, «ինքնին մի ակադեմիա»՝ իր պատմատեղա-ազգագրական կոթողային երկերով, իւրովի անհասանելի մի բարձունք, որ վերջին գագաթն է, յաւերժացման կնիքը այն բազմաբեղուն ժամանակամիջոցին՝ գոր Լեւոն կոչած է «Միթարեան դար», միանգամայն ներշնչումի աղբիւրը՝ ուղղակի կամ անուղղակիօրէն կրտսեր սերունդներու անհամար ներկայացուցիչներու, որոնք տեսան իր մէջ մասիսատիպ նահապետը՝ «ալեւոր, անմահ, հսկայ, մեծասեր»¹:

Ալիշանը կրում էր բազմապիսի շնորհներ, հաւասարաչափ փայլելով տարբեր բնագաւառներում: Հայագիտության դպրոցի ստեղծողներից եւ երախտաւորներից մէկն է նա եւ այն տեսակէտին էր, որ չկայ պատմութիւն առանց աշխարհագրութեան եւ ժամանակագրութեան, իսկ ճարտարապետութիւնն էլ գոյութիւն չունի առանց տարածքի ու միջավայրի: Մեծ հայագէտն իր ամբողջ ներուժը նուիրում է տարածքին՝ Հայաստան աշխարհին, հայ-

1 Զէքիեան, Լ., «Բազմավէպ». հայագիտական հանդէսներու նահապետը (150-ամեայ յորելեանին առթիւ), ՊԲՀ, թիւ 1, 1995, 103:

կական լանդշաֆտին, որի անբաժանելի մասն են կազմում ճարտարապետական յուշարձանները եւ որոնց պատմութիւնը նա ներկայացնում է: Իր առաջին իսկ գործերից սկսած Ալիշանը Հայաստանի աշխարհագրութիւնն ու պատմութիւնը ներկայացնում էր պատմաճարտարապետական յուշարձանների եւ հնութիւնների ընդհանուր նկարագրի հետ միասին: Ուշագրաւ է, որ ականաւոր գիտնականը երբեք չի եղել Հայաստանում, սակայն աղբիւրագիտական լայնամասշտաբ ուսումնասիրութիւնների արդիւնքում կարողացել է ճշտել ու վաւերացնել շատ պատմաաշխարհագրական տեղանուններ, բնութագրել եւ տեղագրել բազմաթիւ հնութիւններ: Նա նախատեսել էր «Տեղագիր Հայոց մեծաց» աշխատութեան մէջ ամփոփել Հայոց բոլոր 15 «աշխարհների» պատմաաշխարհագրութիւնը, սակայն հասցրեց հրատարակել միայն «Ծիրակ», «Սիսուան», «Սիսական», «Այրարատ» աշխատութիւնները, որոնք շատ արժէքաւոր գործեր են ճարտարապետական յուշարձանների հետազոտութեան առումով՝ երբեմն նոյնիսկ սկզբնաղբիւրի նշանակութիւն ունեցող եւ որոնք էլ դարձել են մեր քննարկման առարկան:

«Տեղագիր Հայոց Մեծաց»-ը հրատարակուել է 1855 թ. կէսերին՝ Վենետիկում, որը մեծ յաջողութիւն է ունեցել եւ գնահատուել ժամանակակիցների կողմից (Մարի Ժան Բրոսսէ, էդուարդ Դիւլորիէ): Վերջինիս նախաձեռնութեամբ աշխատանքը թարգմանուել է եւ տպագրուել «Ժուռնալ Ազիատիկում»²: Այս աշխատութիւնը իբրեւ պատմական Հայաստանի աշխարհագրութեան վերաբերեալ հմուտ տեղեկատու ձեռնարկ, դարձաւ Հայաստանի պատմութեամբ ու աշխարհագրութեամբ զբաղողների սեղանի գիրքը: Հրատարակութեան առաջին իսկ օրուանից սկսած ընդհուպ մինչեւ մեր ժամանակներ:

Ալիշանն այստեղ ուսումնասիրութեան նիւթ է դարձրել բացառապէս պատմական Հայաստանի աշխարհագրութիւնը: Տրուած է Հայաստան աշխարհի ձեռակերտ եւ անձեռակերտ նկարագիրը: Գետերի, լեռների, տարբեր վայրերի կլիմայական բնութագրի, կենդանական եւ բուսական աշխարհի գիտական նկարագրութիւնների անբաժանելի մասն են կազմում պատմական Հայաստանի նահանգների (Վասպուրական, Սիւնիք, Արցախ, Այրարատ, Տայք եւ այլն) եւ այնտեղ գտնուող հնութիւնների (ժողովրդական տներ,

2 ՇՏԻԿԵԱՆ, Ս., *Ղեւոնդ Ալիշան (Ծննդեան 150-ամեակի առթիւ)*, ՊԲՀ, քիւ 2, 1970, 19:

էջմիածնի Մայր տաճար, Վանայ բերդ եւ այլն) պատմաաշխարհագրական նկարագիրն ու գիտաբանասիրական պատմութիւնը: Յաջորդիւ արւում են պատմա-աշխարհագրական բնոյթի ուշագրաւ եզրակացութիւններ: Սա բոլորովին նոր մտեցում էր եւ նոր մեթոդաբանութիւն:

Մինչ Ալիշանը Հայաստան աշխարհի մասին եղած պատմաաշխարհագրական եւ յուշարձաններին վերաբերող տեղեկութիւնները ծայրաստիճան կցկտուր էին, հակասական, աւելի շուտ իրար բացասող, քան լրացնող: Եւրոպացի եւ հայ մի քանի ճանապարհորդների հպանցիկ եւ ոչ մասնագիտական նկարագրութիւններ, պարբերականներում հրատարակուած եւ տեղեկատուական բնոյթ ունեցող հայկական մէկ երկու նահանգների տեղագրումներ, Աբէլ Մխիթարեանի, Մեսրոպ Սմբատեանի, Քաջբերունու (Պարբիէլ Տէր-Յովհաննիսեան) գրչին պատկանող մի քանի մեծ ու փոքր պրակներ, ահա թերեւս այն ամէնը, ինչ Հայաստանի վերաբերեալ կարող էր հաղորդել ԺԹ. դարի գիտական միտքը:

«Տեղագիր Հայոց Մեծաց»-ում զետեղուած նիւթերը որոշ դէպքերում սկզբնաղբիւրի նշանակութիւն ունեն այսօր էլ: Մեզ համար կարեւոր են եղել աշխատանքում յիշատակուած՝ Շուշիի մօտ գտնուող եկեղեցու մասին տեղեկութիւններն ու նկարը, որը վստահաբար, ներկայումս Արցախի հանրապետութեան Ասկերանի շրջանի Վանքասարի խաչաթեւ կենտրոնագմբէթ եկեղեցին է, որ ուշմիջնադարեան հայկական աղբիւրներում յայտնի է նաեւ որպէս Տիգրանակերտի եկեղեցի³:

Այսօր այն «կանգնած» է սարի գագաթին՝ 1980-ականներին՝ աղբեջանական զեղծարար «վերականգնման» արդիւնքում այլափոխուած վիճակով: Այդ վերականգնման ընթացքում եկեղեցին լուրջ կորուստներ է կրել: Վանքասարի եկեղեցու ծաւալատարածական յօրինուածքի մասին խօսելը բաւական բարդանում է նաեւ այն պատճառով, որ նախնական յատակագծի վրայ վերականգնուել է մի ծաւալ, որը չի համապատասխանում նախնական կառոյցին: Արդիւնքում վաղբրիստոնէական այս նուրբ կառոյցը վեր է ածուել անհեթեթ՝ այլափոխուած մի զանգուածի՝ որպէս վերականգնման եւ պահպանութեան անուան տակ իրականացուած մշակութային իւրօրինակ վանդալիզմի դրսեւորում:

3 ՋԱԼԱԼԵԱՆՅ, Ս., Համապարտորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տփլիս 1858, 344-345:

Եկեղեցին ունի խաչաձև յատկազծային յորինուածք եւ պատկանում է վաղմիջնադարեան փոքր խաչաձև կենտրոնազմբէթ եկեղեցիների եռախորան ենթատիպին: Յօրինուածքի հիմքը կազմող գմբէթատակ քառակուսին ամփոփուած է արեւմուտքից ուղղանկիւն, միւս կողմերից կիսաշրջանաձև խաչաթեւերով, որոնք արտաքինից ուղղանկիւն են: Մուտքերը բացուած են երեք կողմերի (արեւելեանից բացի) խաչաթեւերում, ուր զետեղուած են նաեւ պատուհաններ: Մուտքերի ուղղանկիւն բացուածքները ծածկուած են բարաւորի կամարաձև քարերով, որոնք պատի հարթութեան մէջ են եւ նրա որմածքի օրգանական մասն են կազմում: Արեւմտեան մուտքի բարաւորը ունեցել է խաչաքանդակ⁴: Այսօր այդ յորինուածքից նոյնպէս միայն հետքեր են մնացել, քանզի այն եւս միտումնաւոր եղծուել, հարթեցուել է: Արեւմտեան ճակատի վրայ նշմարելի են շքամուտքի դրոշմուած հետքերը, որոնք խօսում են ժամանակին վերջինիս գոյութեան մասին:

Կառոյցի ծաւալատարածական յորինուածքն ու համաչափական համակարգը նոյնպէս տուժել են: Ճակատներում չեն շարուել քիւերը, ձեւափոխուած են նաեւ պատուհանների բացուածքները՝ դրանք բոլոր շարուել են ուղղանկիւնաձև եւ առանց պսակների՝ մինչդեռ վաղքրիստոնէական բոլոր գուգահեռներում «կամարունքերով» լուսամուտներ են: Այլափոխուել են նաեւ կոնստրուկտիւ հանգոյցների (տրոմպներ, գմբէթարդներ, թաղ, գմբէթ) իրականացման եղանակները: Վանքասարի եկեղեցին արցախեան պատերազմից եւս տուժել էր: Արեւմտեան ճակատում՝ բարաւորից վերեւ արկը բաւական մեծ խոռոչ էր բացել, որը սպառնում էր պատի կայունութեանը:

Եկեղեցու վերակառուցման առաջարկը կազմուել է բնօրինակային չափազրուծիւնների, վերոնշեալ տեղեկութիւնների, փաստական կուռանների, համեմատական (մասնաւորապէս Քարաշամբի, Այլաբերի, Թալինի ս. Աստուածածին եռախորան եկեղեցիների) նիւթերի, տարածաշրջանի վաղմիջնադարեան հարուստ մշակութային շերտի եւ ճարտարապետական համալիրների համադրութեան եւ եկեղեցու արտաքին տեսքը պատկերող՝ «Տեղագիր Հայոց Մեծաց»-ում զետեղուած լուսանկարի հիման վրայ: Արդիւնքում բացայայտուել է հայ ժողովրդի արցախեան հատուածի ստեղ-

4 ՄԿԻՏՁԵԱՆ, Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները, Երևան 1985, 78: МКРТՎՅԻ, III., Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван 1988, 63-64:


Ծած նիւթական մշակոյթի յուշարձանները աղուանական համա-
րելու վարկածի ողջ սնանկութիւնը⁵ (նկ. 1):



ա



բ



գ

Նկար 1. ա. Վանքաարի եկեղեցին «Տեղագիր Հայոց Մեծաց», 89, բ. – Երկայիս վիճակը (յուսանկար՝ Հրայր Բագէ), գ. – Վերակառուցման առաջարկը՝ Լ. Կիրակոսեանի:

5 ԿԻՐԱ.ԿՈՍԵԱՆ, Լ., Վանքաարի եկեղեցու նարտարապետութիւնը եւ աղբր-
րեջանական «վերականգնումը», ՊԲՀ, ԹԻՒ 1, 2013, 122-133:


Հայոց 15 գաւառների պատմաաշխարհագրութեանը նուիրուած Ալիշանի խոշոր ձեռնարկման անդրանիկ աշխատութիւնը «Շիրակ»-ն է՝ հրատարակուած 1881 թ.: Սրա ձեռագրերը նա յանձնել էր Հայաստան ուղեւորուող Մխիթարեան հայրերից մէկին Ախուրեան գետի ալիքների մէջ նետելու համար⁶:



ա



բ



գ

Նկար 2. ա. եւ բ. Անիի պարիսպները. «Շիրակ», 36-38
գ. - Գերկայիս վիճակը:

Շիրակը Ալիշանի ուշագրութեանն էր արժանացել յատկապէս այն հանգամանքով պայմանաւորուած, որ այստեղ էր գտնուում մայրաքաղաք Անին՝ Բագրատունեաց ամրանիստը, միջնադարեան հայկական քաղաքաշինութեան փառքը՝ իր հարուստ ճարտարապետութեամբ: Անին ներկայացուած է համալիր քննութեամբ՝ լանդշաֆտ եւ տեղադրութիւն, ամրաշինութիւն (նկ. 2), եկեղեցիներ, մզկիթներ, քաղաքացիական շինութիւններ, դամբա-

6 ԵՐԵՄՅԱՆ, Ս., Կենսագրութիւն Հ. Ալիշանի, Վեներտիկ 1902, 192:

րաններ, կամուրջներ: Բժախնդիր մանրամասնութեամբ եւ վարպետութեամբ ներկայացուած են կառուցների չափագրութիւնները⁷:

Փաւառում գտնուող իւրաքանչիւր տեղավայրի եւ յուշարձանի կապակցութեամբ հեղինակը ոչ միայն հաղորդում է տեղագրական աշխարհագրական բնօյթի բազմապիսի տեղեկութիւններ, այլեւ տալիս է դրանց ըստ հնարաւորին լրիւ պատմութիւնը, հրապարակում է տուեալ վայրում եղած արձանագրութիւնները, յիշատակում՝ քիչ թէ շատ նշանաւոր գործիչներին ու նրանց կատարած գործերը:

Ներկայացուած են նաեւ հայ ժողովրդի մտաւոր եւ մշակութային կեանքում նշանակալի դեր ունեցած հոգեւոր կենտրոնները, կամ, ինչպէս սիրում էր արտայայտուել Ալիշանը, «վանորայք եւ անապատքտ»՝ Դպրեվանքը, Հոռոմոսի, Տեկորի, Մարմաշէնի, Հառիճայ վանքերը: Համալիրների առանձին կառուցների ճարտարապետական առանձնայատկութիւնները ներկայացնելուց բացի, այստեղ տրուած են նաեւ հին ու նոր արձանագրութիւններն ու նրանց վերծանումները, վանքի նշանաւոր վանահայրերի ըստ հնարաւորին ամբողջական կենսագրութիւնը, վանքում եղած գրչագրերի ընդհանուր բնութագրութիւնը⁸:

Շիրակը Հայաստանի այն նահանգներից էր, որը, ասես փոքրացուած ձեւով, իր մէջ խտացրել էր հայ ժողովրդի հին ու նոր պատմութիւնն ու աշխարհագրութիւնը իրենց համապատասխան հասարակական, քաղաքական եւ մշակութային դրսեւորումներով: Այս հաւաստի պատկերը նորարարական՝ գիտական նկարագրութեան եղանակով ներկայացուած էր «Շիրակ»-ում: Աշխատութիւնը գրուած էր գիտաաշխարհագրական ուսումնասիրութիւն գրելու նոր մեթոդով, որի առաջին կիրառողը եղաւ Ալիշանը:

«Շիրակ»-ից չորս տարի անց, 1885 թ., Վենետիկում հրատարակուեց «Սիսուան եւ Լեւոն Մեծագործ» խորագիրը կրող Ալիշանի յաջորդ աշխատութիւնը, որը մէկ անգամ եւս հաւաստում էր, որ նրա հեղինակը շարունակում էր հաստատակամօրէն իրականացնել ամբողջ Հայաստանը տեղագրելու վերաբերեալ իր վիթխարի մտայղացումը: Աշխատութիւնը նախապէս որոշուած էր կոչել «Կիլիկիա», քանի որ այն, ըստ հուլիանի, վերաբերում էր Կի-

7 Ա.Լ.ԻՇԱՆ, Ղ., *Շիրակ*, Վենետիկ 1881, 35-72:

8 Ա.ճղ., 18-33:

լիկիայի աշխարհագրութեանը, պատմութեանն ու պատմաճարտարապետական յուշարձաններին: Յետագայում, Ալիշանն իր աշխատութեանը կցում է «Լևոն Մեծագործ» ընդարձակ պատմական ուսումնասիրութիւնը, որի պատճառով աշխատութեան վերնագրում արտայայտուում է նաեւ այդ հատուածը:



ա



բ



գ



դ

Նկար 3. ա. եւ գ. Կարսի բերդը, ս. Առաքելոց եկեղեցին «Այրարատ», 81-83
բ. եւ դ. Ներկայիս տեսքը:

«Սիսուան եւ Լևոն Մեծագործ» աշխատութեան գրելաոճը տարբերուում էր նախորդներից: Ինչպէս իրաւացիօրէն նշում են հետազոտողները, Ալիշանը տեղանունները, հնութիւնները, դէպքերն ու դէմքերը, եզրայանգումներն ու ապացուցումները ներկայացնում է «կարծեմ», «թուի», «որպէս ասեմ», «աղօտ ինչ նշմարք իցեմ», «ստուգապէս ոչ գիտեմ» կարգի ինքնապահանջով գրիչ արտայայտութիւններով⁹: Ասուածն ունի իր հիմնաւորումը. պատմաբան աշխարհագրագէտը ներկայացնում եւ տեղագրում էր այնպիսի մի երկիր, որն արդէն չորս հարիւր տարի պատմութիւն էր

9 ՇՏԻԿԵԱՆ, Ս., նշ. աշխ., 23:

դարձել եւ այս կամ այն հարցը ճշգրտելու համար նա չէր կարող օգտուել տեղերում գտնուող իր բարեկամների ծառայութիւններին, ինչը որ կատարում էր Շիրակ «աշխարհը» տեղագրելիս: Այստեղ նա հիմնականում օգտուել է Կիլիկիայի վերաբերեալ եւրոպացի աշխարհագրագէտների (Հ. Կիպերտ, Վ. Լանգլուա) աշխատանքներին եւ հայ պատմիչների (Մատթէոս Ուռհայեցի, Ագաթանգեղոս, Սամուէլ Անեցի) գործերին: Ճշգրտումներ կատարելը դժուար էր, որովհետեւ Կիլիկեան Հայաստանի տեղավայրերը, քաղաքները, բերդերը տարբեր ժամանակների նուաճողների քմահաճոյքներին կախուած, բազում վերանուանումների էին ենթարկուել: Մէկ տեղի համար տրուում էին մի քանի անուանումներ, որը շատ յաճախ շփոթութիւն էր առաջացնում: Այս ամէնով հանդերձ, արժէքաւոր աշխատութիւն էր ներկայացուած, որը կարելոյ տեղեկութիւններ է պարունակում Կիլիկիայի պատամաճարտարապետական ժառանգութեան վերաբերեալ: Այսօր դրանց կարելորութիւնն աւելի քան մեծ է, քանզի այս տարածքում հետազոտութիւններ կատարելը բազմաթիւ բարդութիւնների հետ է կապուած:

Աշխատութեան մէջ մանրակրկիտ կերպով նկարագրուած են Սիս քաղաքում եղած կարելոյ շինութիւնները (Կաթողիկոսարան, Ռուբինեանների ապարանքը), հոգեւոր ու մշակութային կենտրոն հանդիսացող հաստատութիւնները, շարադրուում է Ներսէս Լամբրոնացու համալսարանի պատմութիւնն ու տեսութիւնը, որն աւարտուում է տեղում ապրած հայ նշանաւոր մտաւորականների կեանքի ու գործունէութեան ներկայացմամբ¹⁰: Այս աշխատութիւնը հայութեան համար կարելոյ էր նաեւ քաղաքական առումով: Կիլիկեան քաղաքներն ու բերդերը, եկեղեցիներն ու բնակատեղիները գալիս էին վաւերականացնելու տարածքի հայկականութիւնը, ինչը Օսմանեան կայսրութիւնը չէր կարող հանդուրժել: Ժամանակին այդտեղ «Սիսուան եւ Լեւոն Մեծագործ»-ը արգելուեց: Սակայն, այնուամենայնիւ, երբ աշխատութիւնը թափանցել էր թուրքիա, անյապաղ բռնագրաւուեց այն պատճառաբանութեամբ, որ դրա ճիշտ հայրենասիրական առաջաբանը «պղտորում է օսմանահայատակ ուայայի միտքը նրան յուզումների է դրդում»¹¹:

10 Ա.ԼԻՇԱՆ, Ղ., *Սիսուան եւ Լեւոն Մեծագործ*, Վեներտիկ 1885, 211-230:

11 ՇՏԻԿԵԱՆ, Ս., *Ալիշանը հայ մտաւորականների յուշերում*, Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, 1987, թիւ 6, 42:



ա



բ

Նկար 4. ա. Յովհաննավանքի ա. Կարապետ եկեղեցու
բարաուրի քանդակը, «Այրարատ», 169
բ. Ներկայիս վիճակը:

Ալիշանի յաջորդ նշանաւոր ուսումնասիրութիւնը՝ «Այրարատը», որը նուիրուած էր Հայաստանի համանուն գաւառի տեղագրութեանն ու պատմաճարտարապետական ժառանգութեանը, հրատարակուել է «Սիսուան եւ Լեւոն Մեծագործ»ից մօտ հինգ տարի յետոյ, վեճատիկում: «Այրարատի» հրատարակութիւնը լրիւ տեսքով աւարտուեց 1890 թ.: Այս ժամանակաշրջանը հայ ժողովրդի եւ ոչ մուսուլման ազգերի համար դաժանութիւնների եւ խստութիւնների ժամանակաշրջան էր, որ կապուած էր «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդի անուան հետ: Սրանք կամայականութիւնների տարիներ էին, երբ, ամենաանմեղ արարքն անգամ որակուած էր որպէս «պետական դաւաճանութիւն», «օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը փայտայելու փորձ», իսկ «հայրենիք», «ազատութիւն», «անկախութիւն», «փրկութիւն» բառերն արտաբերելը հաւասարագօր էր պետական յանցագործութիւն: Այսպիսի պայմաններում է հրապարակ գալիս Ալիշանի աշխատութիւնը, որը կրում

էր «Այրարատ» անունը, որի սոսկ կիրառութիւնը եւ առաւել եւս՝ աշխատութեան մէջ արծարծուած մտքերն ու դրոյթները 1890-ական թթ.-ին կատարեալ մեղսագործութիւն էին թւում:



ա




բ

Նկար 5. ա. Գեղարդավանքի ընդհանուր տեսքն ու գլխաւոր յատակագիծը, «Այրարատ», 336, 337, ր. Ներկայիս տեսքը:

Աշխատութեան մէջ մանրամասն ներկայացուած են Այրարատ «աշխարհի» բոլոր գաւառներն իրենց պատմաճարտարապետական յուշարձաններով: Օրինակ, մանրամասն քննարկուած է պատմական Կարսն իր ողջ համալիրով՝ բերդը, քաղաքամասերը, Վարդանի կամուրջն ու Առաքելոց եկեղեցին (նկ. 3): Ալիշանն աւելորդ չի համարուած մէկ անգամ եւս ներկայացնել պատմական Շիրակի ճարտարապետական ժառանգութիւնը (Անի, Խծկոնք, Տեկոր): Արագածոտնում քննարկուած են Մաստարայի եկեղեցին, Թալինի Կաթողիկէն եւ նրան պատկանող արձանագրութիւնները: Նահապետի ուշագրութիւնից չեն վրիպել նաեւ Արմաւիր մայրաքաղաքի Վանի թաղաւորութեան շրջանի սեպագիր արձանագրութիւնները: Կարեւորուել են կառույցների կոնստրուկտիւ եւ դեկորատիւ հանդուցները, կոթողները, խաչքարերը (օրինակ Մրենի

եկեղեցու բարաւորի քանդակը, Յովհաննավանքի ս. Կարապետ եկեղեցու բարաւորը, գաւթում տեղադրուած խաչքարը) (նկ. 4): Մանրամասն քննութեան է ենթարկուել էլմիածնի հոգեւոր համալիրը՝ եկեղեցական, կրթական, տնտեսական եւ ամրաշինական բաղկացուցիչներով հանդերձ: Աշխատութեան մէջ զարմացնում են Այրարատում կառուցուած բազմաթիւ վանքերի ու անապատների մանրակրկիտ տեղեկատուութեանը ուղեկցող գրաֆիկական եւ պատկերազարդ նիւթերի առատութիւնը (նկ. 5):

«Այրարատի» էջերում վառ գոյներով եւ մանրամասն ներկայացուած են ուշ միջնադարեան Երեւանի բերդը, թաղերը (Շահար, Քարհանքի, Կոնդ, Նոր թաղը) եւ պաշտամունքային կառուցները (եկեղեցիներ, մզկիթներ): Հետաքրքիր բնորոշմամբ է ներկայացուած «պարտիզալատ» Շահարի Կաթողիկէ՝ ս. Աստուածածին եկեղեցին՝ որպէս օրօրոցաձեւ՝ ասել է թէ սրահաւոր, բազիլիկատիպ եկեղեցի¹²: Այս աշխատութեան մէջ Ալիշանն արժանի եւ կարեւոր յիշատակութեամբ է ներկայացնում հնագիտական յուշարձանները՝ մասնաւորապէս Արտաշատ եւ Դուին մայրաքաղաքները¹³: Ալիշանի ներկայացրած տուեալներն ու սխեմատիկ տեղադրական հանդիսների հաւաստիութիւնն, այսօր հաստատուել է այդ հնավայրերում կատարուած պեղումների շնորհիւ (նկ. 6):



ա



բ


Նկար 6. ա. Արտաշատի տեղահանդիսը, «Այրարատ», 399, բ. Միջնաբերդի գլխաւոր յատակագիծը՝ պեղումներից յետոյ:

12 Ա.Լ.ԻՇԱՆ, Ղ., *Այրարատ*, Վեներտիկ 1890, 315:

13 Ա.Աղ., 394-409:



ա



բ

Նկար 7. ա. նորավանքի Ս. Աստուածածին, կրկնայարկ՝ դամբարան
 եկեղեցին, «Սիսական», 1885,
 ք. ներկայիս տեսքը, վերակառուցումը՝ Հ. Գասպարեանի:

«Այրարատ»-ի հրապարակումից յետոյ Ալիշանի բոլոր աշխատութիւնների մուտքը թուրքիա արգելուել է: Դա հասկանալի էր, քանի որ հեղինակն իր գիտական գործունէութեամբ էլ արծարծում էր նոյն հայրենասիրական տրամադրութիւնները, ինչ որ անում էր գեղարուեստական գրականութեան միջոցով: Դրա փոխարէն՝ գիրքը բարձր գնահատականների է արժանացել թուր-

քիայից դուրս գտնուող մտաւորականների շրջանում: «Հանդէս ամսօրեայ» - 1890 թ. № 10. գրախօս՝ Յ. Տաշեան, «Արձագանք» - 1890 թ. № 20. գրախօս՝ Ստ. Մալխասեանց, «Նոր դար» - 1890 թ. № 170. գրախօս՝ Պ. Պռօշեան, «Մշակ» - 1901 թ. № 256. գրախօս՝ Ստ. Մալխասեանց եւ բազում ուրիշ պարբերականներ հրատարակում են գրողատական գրախօսականներ Ալիշանի ու նրա աշխատութեան մասին, արժեւորելով դիրքը՝ ամփոփուած վիթխարի նիւթի նշանակութիւնը հայագիտութեան ու աշխարհագրագիտութեան համար, բացայայտել են այն անփոխարինելի դերն ու նշանակութիւնը, որն ունի այդ գործը:

Ընդամէնը երեք տարի անց 1893 թ. Ալիշանը գրեց չորրորդ նշանաւոր աշխատութիւնը՝ «Սիսական»ը, որը հրատարակուեց Վենետիկում եւ որտեղ հեղինակը քննութեան առարկայ էր դարձրել Սիւնեաց աշխարհը: Նոյնքան ջանասիրութեամբ եւ մանրակրկիտ քննութեամբ են ներկայացուած տարածաշրջանի պատմական վայրերը, ճարտարապետական համալիրներն (Այրիվանքը, Սեւանավանքը, Նորավանքը) ու յուշարձանները¹⁴ (նկ. 7): Դժբախտաբար այս աշխատութիւնը եղաւ Ալիշանի գիտական ձեռնարկման կարգապի երգը: Հայաստանի բոլոր «աշխարհների» մասին քննական ուսումնասիրութիւն գրելու 20-22 հատորանոց նրա նախագիծն ընդհատուեց միայն մեծ գիտնականի մահուան պատճառով: Սակայն արուածն էլ բաւական էր ասելու համար, որ Ալիշանը ժամանակին նոր էջ բացեց հայ աշխարհագրագիտութեան եւ պատմագիտութեան բնագաւառում, որովհետեւ կարողացաւ տաղանդաւոր կերպով մէկը լրացնել միւսով եւ մէկը պատճառաբանել, բացատրել ու ամբողջացնել միւսով: Աշխատութիւններ էին գրանք, որոնցում աշխարհագրագէտն իր համար, պատմաբանն իր համար, գրականագէտ-բանասէրն իր համար, հայկական ճարտարապետութեամբ հետաքրքրուողն իր համար, վիճաբանագէտն իր համար, լեզուաբանն ու հայոց լեզուի մասնագէտն իր համար, եւ այս թուարկումը կարելի է էլի շարունակել, կարող են անբաւ ու անքանակ նիւթ գտնել գիտական ուսումնասիրութեան ու քննութեան համար: Ալիշանն ունի նաեւ պատմելու եւ վերլուծելու աշխոյժ եղանակ եւ պատկերաւոր մտածողութիւն ու ինքնատիպ գրելաոճ:

14 Ա.Լ.ԻՇԱՆ, Ղ., Սիսական, Վենետիկ 1893, 336-338:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1. Ալիշանի գործերում ճարտարապետական յուշարձանները դիտարկուած են բնական լանդշաֆտում՝ շէշտելով հայկական ճարտարապետութեան կարեւոր յատկանիշը՝ բնութեան եւ միջավայրի հետ ներդաշնակ միասնութիւնը:
2. Ալիշանի քննարկման են ենթարկուել հայկական ճարտարապետական ժառանգութեան բոլոր բաղկացուցիչները՝ բնակատեղիներ, քաղաքներ, բերդեր, ժողովրդական տներ, վանական համալիրներ, եկեղեցիներ, փոքր ճարտարապետական ձեւեր:
3. Պատմաճարտարապետական ժառանգութիւնը ներկայացուած է քննական վերլուծութեամբ՝ պատմաբանասիրական աշխարհագրութեան ետնախորքի վրայ, որը ժամանակին գիտական մտքի մի նոր՝ համապարփակ դրսեւորում էր:
4. Ալիշանի գործերում գետեղուած՝ հայկական ճարտարապետութեանը վերաբերող նիւթերը առանձին դէպքերում սկզբնաղբիւրի նշանակութիւն ունեն եւ կարեւոր կռուաններ են դառնում յուշարձանների վերականգնման եւ վերակազմութեան նախագծերի կազմման գործընթացներն իրականացնելիս:
5. Ալիշանի ստեղծագործութիւնները ստանձնել էին հայկական պատմաճարտարապետական ժառանգութեան ճանաչողութեան եւ հանրահռչակման առաքելութիւնը, որն էլ նպաստելու էր ազգային ինքնագիտակցութեան ամրապնդմանը:

ԼԻԻԲՐԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Summary

RESEARCH OF ARMENIAN ARCHITECTURE IN FR. GHEVOND ALISHAN'S WORKS

LYUBA KIRAKOSYAN

The article presents the materials related to historical and architectural heritage in Ghevond Alishan's fundamental works such as "Armenian Chronicles", "Shirak", "Ayrarat", "Sisuan and Levon the Benefactor" and "Sisakan".

It has been concluded that:

- Architectural monuments in Alishan's works are viewed in a natural landscape, emphasizing the important feature of Armenian architecture- the harmony with nature and the environment.
- All the components of the Armenian architectural heritage, such as settlements, cities, fortresses, folk houses (traditional), monastic complexes, churches, small architectural forms have been discussed.
- The historical and architectural heritage is represented by a review of the historical and historico-philological geography of the past, which was once a completely new manifestation of scientific mind.
- The materials related to Armenian architecture in Alishan's works, in some cases, have the significance of the original source and are critical to the process of rebuilding and reconstructing monuments.
- Alishan's works took on the mission of promoting and popularizing the Armenian historical-architectural heritage, which would contribute to strengthening national self-consciousness.